«Ականատես» դիտորդական առաքելություն

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնադրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ-ի և «Ռեստարտ» քաղաքացիական նախաձեռնության կողմից 2018 թվականին: «Ականատես» դիտորդական առաքելության գործընկերն է նաև Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը: «Ականատես»-ն իրականացնում է միջազգային և տեղական փորձի հիման վրա մշակված մեթոդաբանությամբ ընտրությունների դիտորդություն՝ գնահատելով ընտրական գործընթացների համապատասխանությունը, ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այնպես էլ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջազգային ստանդարտներին:

«Ականատես» դիտորդական նախաձեռնությունը նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը: Նախաձեռնությունն առաջնորդվում է քաղաքական չեզոքության և անկողմնակալության սկզբունքներով՝ չունենալով որևէ նախապատվություն կամ կողմնորոշում ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (դաշինքի) կամ թեկնածուի նկատմամբ:

«Ականատես»-ն իրականացրել է 2018թ. Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների կարճաժամկետ դիտարկում (155 դիտորդ) և նախատեսում է 2018թ. ԱԺ արտահերթ ընտրությունների երկարաժամկետ (36 դիտորդ) և կարճաժամկետ (շուրջ 700 դիտորդ) դիտարկում: Հետագայում հնարավոր է՝ նախաձեռնությունը դիտարկի նաև այլ ՏԻՄ և համապետական ընտրություններ:

Նախաձեռնության բոլոր դիտորդներն անցնում են ընտրական գործընթացների թեմայով վերապատրաստում՝ հաղորդելով օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվություն ընտրական գործընթացների վերաբերյալ: Դիտորդների հավաքագրած տվյալները վերլուծվում և ամփոփվում են նախաձեռնության զեկույցներում, տեղեկագրերում, մամուլի հաղորդագրություններում: Արձանագրված խախտումների հիման վրա նախաձեռնության իրավաբաններն, ըստ անհրաժեշտության, կազմում են բողոքներ/հայցեր և հետամուտ են լինում համապատասխան ատյաններում դրանց ընթացքին:

Դիտորդական առաքելությունն իրականացվում է Եվրոպական միության, Ժողովրդավարության ազգային ինստիտուտի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի և Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստանի աջակցությամբ:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Հայկ Դավթյանին՝(093)02-52- 71 հեռախոսահամարով: